ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մայրենի

(առարկա)

ԹԵՄԱ **Հեքիաթաթերապիայի և հեքիաթի դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մոտ համագործակցային կարողությունների ձևավորման միջոց**

Կազմեց՝ Աննա Վարուժանի Բաբայան

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. Հեքիաթն իբրև ժողովրդական բանահյուսության ժանր

1. 1 Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները ----------6

1. 2. Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտքի զարգացմանը միտված ուղենիշ ----------8

1. 3 Հեքիաթի ուսումնասիրումը տարրական դասարաններում ---------- 11

ԳԼՈՒԽ 2.

ՀԵՔԻԱԹԱԹԵՐԱՊԻԱՆ և ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԵՔԻԱԹԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԵՐՈՒՄ

2.1. Բեմադրությունների դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականի ճանաչողական ոլորտի զարգացման գործում----------14

2.2 Հեքիաթաթերապիա ----------17

2.3 Բեմադրությունների դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնական գործընթացում----------22

ԳԼՈՒԽ 3 ՀԵՔԻԱԹԱՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁևԱՎՈՐՈՒՄ

3.1 Հետազոտական աշխատանք ----------24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------27

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------28.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսություն, ժողովրդական ֆոլկլոր , այս կամ այն ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունը: Բանահյուսության մեջ ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել կարևոր դեպքերը, իր դարավոր փորձն ու իմաստությունը, ձգտումներն ու իդեալները: Ըստ էության, բանահյուսությունը ժողովրդի կյանքի և աշխարհազգացողության հայելին է: Ժողովրդական բանահյուսության երկերն ստեղծվել և դարերով պահպանվել են բանավոր, հաղորդվել սերնդից սերունդ: Դրանք շատ հաճախ բանասացի կողմից կատարվել, նույնիսկ ստեղծվել են ուղղակի լսարանի առջև, երբեմն երգի և նվագի ուղեկցությամբ: Բանահյուսական ստեղծագործությունները ժամանակի ընթացքում փոփոխվել, զարգացվել և հարստացվել են բազմաթիվ անանուն հեղինակների կողմից: Այդ է պատճառը, որ բանահյուսական երկերը սովորաբար մի շարք տարբերակներ են ունենում: Ժողովրդական բանահյուսության տեսակները բազմազան են՝ առակ, հեքիաթ, հանելուկ, ասացվածք, առասպել, ավանդավեպ, ասք, ավանդություն, վիպերգություն (էպոս), աշխատանքային, սիրո երգեր և այլն: Այս ժանրերից յուրաքանչյուրն ունեցել է բովանդակության, կառուցվածքի, պատկերավորության կայուն յուրահատկություն:

Հայտնի է, որ ժողովրդական բանարվեստի ամենատարածված ժանրերից մեկը՝ հեքիաթը, մշտապես եղել է կրտսեր դպրոցականի դաստիարակության կարևոր խթանիչներից: Հեքիաթի նպատակային ուսումնասիրությունը մայրենիի դասաժամերին նպաստում է դպրոցականի անհատականության ձևավորմանը ու մտածողության զարգացմանը , օգնում նրան կյանքի շատ երևույթներ հասկանալու: Ուսուցչի օժանդակությամբ հեքիաթը օգնում է երեխային գիտակցության ենթաշերտերի մեջ ներթափանցելու, հերոսների գործողությունները և քայլերը վեր-լուծելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և գնահատելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու գործում:

Տարրական դասարանների մայրենիի ծրագրում հեքիաթի ուսումնասիրման վերաբերյալ որոշակի պահանջներ են առաջադրված, որոնք անհրաժեշտ են հեքիա-թի ոչ միայն ժանրային առանձնահատկությունների, տեսակների տարբերակման, այլև խոր ու բազմակողմանի ուսումնասիրության, տեքստային աշխատանքների

յուրացման, ստեղծագործական կարողությունների զարգացման ու ձևավորման համար:

Հետազոտության արդիականությունը

Տարրական դասարաններում ուսուցման ընթացքում բացառիկ տեղ ունի հեքիաթը, որը կրտսեր դպրոցականի սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել նրա արժեհամակարգի ձևավորման գործում: Այսօր էլ հեքիաթի՝ նոր մեթոդներով համակողմանի յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական նշանակությունը, խթանում դպրոցականի երևակայության զարգացումն ու ստեղծագործական կարողությունների ձևավորումը:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակը հեքիաթների՝ ներգործության բացահայտումն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականի դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա:

Հետազոտության խնդիրներն են՝

1.ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,

2. ընթերցված հեքիաթներում մատնանշել դրանց անմիջական ազդեցությունը Սովորողների ֆիզիկական մտավոր հուզակամային զարգացման վրա

3. հիմնավորել կրտսեր դպրոցականների անհատականության ձևավորման գործում հեքիաթների բացառիկ նշանակությունը

Հետազոտության մեթոդները

Հետազոտաության թեմայի ուսումնասիրման ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները՝

1. տեսական՝ թեմային վերաբերող մանկավարժական գրականության, մայրենիի և առարկայական չափորոշիչների ու ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնարկների ուսումնասիրում,

2. էմպիրիկ՝ դասալսումներ և դրանց վերլուծություն, փորձարարական դասերի վարում և վերլուծություն, հարցախույզ, արդյունքների վերլուծություն և այլն:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք Սյունիքի մարզի Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի 2 – 3 –րդ դասարաններում:

Հետազոտության նորույթը

Փորձարկել և ներկայացնել հեքիաթի և հեքիաթաթերապիայի ազդեցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականի համագործակցային կարողությունների ձևավորման գործում, արել ենք առաջարկություններ:

Ուսումնասիրության նշանակությունը

Հետազոտության արդյունքում բացահայտված օրինաչափությունները, կիրառված մեթոդների վերլուծությունները լրացնում են գիտական մեթոդիկայի բնագավառում առկա գիտելիքները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ՝ կրտսեր դպրոցականի հեքիաթի և հեքիաթաթերապիայի ունեցած նշանակությունը :

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում իրականացվող դասագործընթացն է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականների համագործակցային կարողությունների համատեքստում:

Հետազոտության առարկան

Հետազոտության առարկան կրտսեր դպրոցականների մտավոր , ֆիզիկական , հոգեբանական , վարքային կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդական համալիրն է:

Ուսումնասիրության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԳԼՈՒԽ 1.

1. 1 ՀԵՔԻԱԹՆ ԻԲՐԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐ

Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները

Հեքիաթը ժողովրդական ստեղծագործության տեսակ է. ստեղծվել է ժողովրդի կողմից և մեզ է հասել՝ հազարավոր սերունդներ դաստիարակելով և սերնդեսերունդ փոխանցվելով: Ավելի ուշ հեքիաթներ ստեղծել են նաև առանձին հեղինակներ: Բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ թե՛ լսել և թե՛ կարդալ: Հեքիաթի կայուն սկիզբն ու ավարտը, մատչելի գաղափարը, հերոսների բնավորության հստակ գծերը, հարազատ են են երեխաների երևակայական աշխարհին: Այսօր էլ երեխաները մեծ սիրով լսում և ընթերցում են հեքիաթներ: Հեքիաթն ունի դաստիարակչական ու բարոյական մեծ նշանակություն, որը արտահայտվում է հերոսների սխրագործությունների, արարքների և խոսքերի միջոցով: Հեքիաթները ստեղծվել են դեռևս հնագույն ժամանակներում, երբ գիտության անբավարար զարգացվածության աստիճանը թույլ չէր տալիս մարդկանց իրենց երազանքներն իրականություն դարձնել և մարդիկ իրենց երազանքներին հեքիաթների միջոցով երևակայական լուծում էին տալիս: Հեքիաթների հիմնական մասը արձակ է, իսկ երբեմն էլ հան-դիպում ենք նաև չափածո հեքիաթների: Ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, հայ ժողովուրդը ևս ունեցել է իր հեքիաթները:

Հայ ժողովրդական մի քանի հեքիաթներ առաջին անգամ հրատարակվում են հայտնի բանահավաք ու ֆոլկլորագետ Գարեգին Սրվանձտյանցի «Մանանա» գրքում 1876 թվին: Շուտով դրան հաջորդում է նույն հեղինակի «Համով – հոտով» բանահյուսական ժողովածուն, որտեղ նույնպես տեղ են գտնում արևմտահայերեն հեքիաթներ:[1] Հայ ժողովրդական հեքիաթները այլ ժողովուրդների հեքիաթներից տարբերվում են իրենց լեզվով, կյանքի նկարագրով, բնության նկարագրությամբ: Դրանց մեջ վեր են հանված օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը, նրանց անկոտրում հոգին, ժողովուրդների բարեկամությունն ու հայրենասիրությունը, որոնք ձեռք են բերվել հայ ժողովրդի պատմական զարգացման ճանապարհին, հայ շինականն ու արհեստավորը՝ իրենց վարք ու բարքով, ապրուստով ու հագուստով: Հայկական հեքիաթներում տեսնում ենք նաև Հայաստանի լեռներն ու կիրճերը, լճերն ու գետերը, երկրի բուսական ու կենդանական աշխարհը:

Բանահյուսությունն ուսումնասիրողների կարծիքով հեքիաթները լինում են երեք տեսակ՝ իրապատում, հրաշապատում և կենդանական: Հեղինակներից ոմանք էլ «հրաշապում» բառի փոխարեն կիրառել են «կախարդական» բառը: Ըստ Ջրբաշյանի՝ լինում են հեքիաթներ կենդանիների մասին, հրաշապատում կամ կախարդական,

[1] Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967, էջ 274:

դյուցազնական, իրապատում, կամ կենցաղային, երգիծական հեքիաթներ և այլն։[2] Ղանալանյանը հեքիաթները բաժանում է 2 խմբի՝ հրաշապատում կամ ֆանտաստիկական և իրապատում կամ ռեալիստական։

Կան հեքիաթներ, որոնք չես կարող նշել, թե հեքիաթի կոնկրետ ո՞ր տեսակին է պատկանում։ Այդպիսի հեքիաթներից են՝ Հ. Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթը, որովհետև այստեղ կան և՛ կենդանական հեքիաթին, և՛ իրապատում հեքիաթին բնորոշ տարրեր։

Անցյալում հեքիաթները դասագրքերում ներառելու շուրջ վեճեր են եղել։ Մեթոդիստ Ե. Ղազարյանը մեղադրեց Աղայանին՝ ասելով, թե հեքիաթների միջոցով երեխաները սխալ պատկերացում են ստանում իրականության մասին։ Աղայանը հերքեց Ղազարյանի տեսակետը՝ ասելով՝ մարդու հանճարի սաղմերը պետք է նրա լսած հեքիաթներում փնտրել, որովհետև դրանք ոչ միայն հոգուն սնունդ են տալիս, այլև մտքին ու երևակայությանը թռիչք, հետևաբար առանց հեքիաթների ուսումնասիրության երեխաների կրթության ու դաստիարակության գործը կատարյալ լինել չի կարող։ Ինչպես Ուշինսկին է նկատել, հեքիաթներում առկա կյանքով ու հետաքրքրություններով լի անընդհատ շարժումը միահյուսվում է պատմելաձևի պարզության ու հաճախակի հանդիպող կրկնությունների հետ և ստեղծում մի ներդաշնակ ամբողջություն, որն իր բոլոր գեղեցիկ մանրամասնություններով, ժողովրդական բառերով, դարձվածքներով ու լեզվամտածողությամբ հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ։ «Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ։ Հեքիաթը հարուստ ու շքեղ աշխարհ է։ Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում ...»[3]։

[2] Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 2006, էջ 186։

[3] Հայ նոր գրականության պատմություն, հ.5, Երևան, 1979, էջ 327։

1.2 Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտքի զարգացմանը միտված ուղենիշ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսումնական գործընթացը կազմակերպելիս կիրառում ու փորձում ենք ապահովել այնպիսի միջավայր,որ սովորողը խաղալով սովորի:Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ:

Կրտսեր դպրոցում փորձում ենք ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ: Շփվելով

կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ, մենք մեր առջև դնում ենք այսպիսի մանկավարժական խնդիրներ.
Երեխան խաղալով հասկանում է ինքն իրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ:
Սովորողի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա: Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին, Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը:
Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝ իմացական ոլորտի զարգացում աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով, հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:
Դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսումնական գործընթացը կազմակերպելիս մեզ օգնության են հասնում բեմադրությունները, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հեքիաթի ուսուցման գործընթացները ավելի արդյունավետ է կազմակերպե դերային խաղերով՝բեմադրություն ներով:Հեքիաթի բեմադրությունը երեխայի ներաշխարհ թափանցելու յուրատեսակ միջոց է: Այն հնարավորություն է տալիս ձևավորել որոշակի արժեքային համակարգ, լուծել դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ, զարգացնել ստեղծագործական մտածողություն: Արդյունքում նրան թվում է, թե ինքն ուղղակի խաղում է, կատարում է որևէ դեր: Սակայն իրականում այդպես չէ, քանի որ յուրաքանչյուր դեր երեխային առաջադրում է այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է մտավոր լարվածություն: Այլ կերպ ասած՝ երեխան սովորում է հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները: Արդյունքում երեխաների մեջ դաստիարակվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են՝աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը: Այսպիսով, բեմադրությունների շնորհիվ երեխան դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ, ինչն էլ նշանակում է, որ նա ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցն է՝ ունակ ինքնուրույն ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ:
Հետևաբար, կարող ենք առանձնացնել բեմադրությունների հետևյալ բնութագրումները՝

1.Անձի յուրահատուկ հարաբերություն շրջապատող աշխարհի հետ:
2.Երեխայի յուրահատուկ գործունեություն, որը փոփոխվում է և զարգանում՝ որպես նրա սուբյեկտիվ գործունեություն:
3.Երեխայի սոցիալականացման ու նրա կողմից յուրացված գործունեության ձև:
4.Յուրացման յուրահատուկ բովանդակություն:
5.Գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի հոգեկանի զարգացումը:

Բեմականացման և բեմադրության ընթացքում լավագույնս դրսևորվում են երեխայի ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, սեփական տպավորություններն ու պատկերացումները, կարծիքն ու վերաբերմունքը արտահայտելու հնարավորությունները: Բեմականացումը իր բնույթով ստեղծագործական աշխատանք է,որի ընթացքում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր իրադրություններ, անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ: Բնականաբար, նշվածը վերարտադրվում է սեփական դիրքորոշմամբ և պարունակում է վերլուծություն և նոր մոտեցումներ: Բեմադրությունների նպատակն ու արդյունքը երևակայական են, սակայն երեխայի կողմից ընկալվում են ամենայն լրջությամբ և ջանքեր են պահանջում նրանից: Դերը տանելու ՝ նպատակին հասնելու համար, նա փորձում է լուծել բարդ՝ իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է երևակայական կերպարների ստեղծման միջոցով: Բեմականացման ընթացքում նա փորձում է հորինել և ստեղծագործել: Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթները և հարաբերությունները: Ցանկացած դեր պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք ակամայից յուրացվում են և գիտակցվում խաղի ընթացքում, դառնում սովորական ու ընդունելի և աստիճանաբար փոխանցվում իրական կյանք: Այստեղ է թաքնված ուսումնական խնդիրը ,որին ավելի մատչելի ու հետաքրքիր լուծումներ է տալիս հեքիաթի բեմականացումը:

1.3 Հեքիաթի ուսումնասիրումը տարրական դասարաններում

Հեքիաթն ունի իրեն հատուկ լեզուն և ոճը և հենց այս առանձնահատկությունների շնորհիվ էլ տարբերվում է ստեղծագործություններից:

Հեքիաթը ուսումնասիրելիս անհրաժեշտ է և կարևոր, որ աշակերտները ընկալեն բովանդակությունը ու գտնեն հեքիաթի երևակայական կողմը: «Հեքիաթն իր երևակայական հերոսներով՝ զարմանահրաշ թագավորներով, չար ու բարի կախարդներով, փերիներով, հսկաներով ու թզուկներով, խոսող կենդանիներով ու բույսերով, թռչող գորգերով շատ մոտ է երեխաների երևակայական աշխարհին: Դա է պատճառը, որ նրանք մեծագույն սիրով կարդում են ու լսում, վերլուծում են ու ներկայացնում հեքիաթները: Չէ՞ որ բարին միշտ հաղթում է հեքիաթներում, և դա նույնպես հոգեհարազատ է երեխաների հոգուն»: [4]

Սովորողներին պետք է ցույց տալ, որ հեքիաթում երևում է հերոսի անվախությունը, քաջությունը, իմաստությունը, բարությունը և այլն: Երեխաները սիրում են հեքիաթները և՛ ունկնդրել, և՛ կարդալ: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն ինքնուրույն որոշեն, թե իրենց կարդացած կամ ունկնդրած հեքիաթում նկարագրված դեպքերից որո՛նք կարող են կատարվել իրականում, որո՛նք՝ ոչ: Դա կնպաստի, որ աշակերտների մոտ ձևավորվի վերաբերմունք կարդացածի բովանդակության նկատմամբ: Երեխաները հավատում են հեքիաթներում գոյություն ունեցող բարի և չար կախարդներին, թռչող ձիերին, կախարդական փայտիկին: Հավատում են, որ բարին միշտ հաղթում է չարին: Սա էլ հենց հեքիաթի դաստիարակչական կողմն է:

Երեխան քննադատաբար չի մոտենում հեքիաթին, այդ պատճառով էլ հեքիաթի մեջ գործող անձանց արհեստականությունը կամ ոչ իրական լինելը չի երևում նրա աչքում. «Հեքիաթում հնարավոր է այն ամենն, ինչը հնարավոր չէ իրական կյանքում: Այն այցելուին հիանալի հնարավորություն է տալիս հասկանալ և ընդունել սեփական անձն ու շրջապատող աշխարհն այնպիսին, ինչպիսին կա, բարձրացնել ինքնագնահատականը և փոխվել ցանկալի ուղղությամբ: Հեքիաթներում ամեն ինչ լցված է ներդաշնակությամբ, որն էլ փոխանցվում է այցելուին»:[5] Հեքիաթներ ընթերցելիս հարկավոր է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Որոշ հեղինակներ գտնում են, որ մայրենիի դասագրքերում պետք է ընդգրկվեն միայն կենդանական և իրապատում հեքիաթները: Աշոտ Տեր-Գրիգորյանը գրում է. «Մեր կարծիքով այս հարցը լրջորեն ենթակա է վերանայման. տիեզերական թռիչքների, կիբեռնետիկայի, էլեկտրոնիկայի, ու հեռուստամեխանիկայի դարում շատ ու շատ հրաշքներ վաղուց դադարել են հրաշքներ լինելուց, և հրաշապատում հեքիաթները երեխաների երևակայությունը զարգացնելու տեսակետից դրական ազդեցություն կարող են ունենալ»:[6]

Դեռևս նախադպրոցական տարիքից երեխաները սիրում են բեմականացնել հեքիաթներ: Արդեն տարրական դպրոցում հեքիաթների շուրջ աշխատանքի ժամանակ հանձնարարվում է դերերով ընթերցանություն , ինչպես նաև բեմականաց-

---

[4] Կ. Թորոսյան, Վ.Ա. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Մայրենիի 2-4 ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013, էջ 89:

[5] https://gog11011.wordpress.com/

[6] Աշոտ Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 201:

նել հեքիաթը, որից երեխաները մեծ բավականություն են ստանում: Բեմականացման շնորհիվ ոչ միայն հղկվում է աշակերտների խոսքը, այլև ճիշտ պատկերացում է ձևավորվում մի շարք երևույթների մասին: Մինչև բեմականացումը անհրաժեշտ է բացահայտել հեքիաթի թեման ու գաղափարը: Բեմականացման ժամանակ երբեմն հարկավոր է հեքիաթներում գործող հերոսների դերերը տալ աշակերտների բնավորության գծերին հակառակ: Դա երեխայի մոտ ձևավորում է ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ և բարձրացնում է ինքնագնահատականը:

‹‹Հեքիաթը վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, «հաճախ պատմեն այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը»:[7] Երեխաները երբեմն պատկերացնում են, թե իբրև հեքիաթի գլխավոր հերոսներն իրենք են: Հեքիաթները երեխաների մեջ սերմանում են բարոյական հատկանիշներ, զարգացնում աշակերտների երևակայությունը, հարստացնում բառապաշարը, դաստիարակում դրական հատկանիշներ: Տարրական դպրոցում հեքիաթի շուրջ աշխատանքի ժամանակ պետք է հասնել նրան, որ երեխաները իրենք ևս փորձեն ստեղծել հեքիաթներ: Հեքիաթն իրոք յուրօրինակ ձև է սովորեցնելու և սովորելու համար՝ անկախ տարիքից. «Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևը ստեղծագործական մեթոդ է և ավելի լայն կիրառություն ունի թե՛ տեսնող և թե՛ չտեսնող երեխաների ուսուցման գործընթացում: Այս դեպքում երեխային հնարավորություն է տրվում յուրովի վերարտադրելու հեքիաթի բովանդակությունը, փոփոխություններ մտցնելու դեպքերի զարգացման մեջ՝ հավատարիմ մնալով հեքիաթի ընդհանուր ոգուն: Միշտ չէ, որ պետք է պատրաստի հեքիաթներ տալ երեխաներին, որպեսզի նրանք վերարտադրեն այն պասիվ կերպով, այլ հաճախ պետք է տալ այնպիսի հեքիաթներ, որոնք անավարտ կլինեն և կզարգացնեն երևակայությունը ու կմղեն ստեղծագործելու: Կարելի է նաև հորինել նոր հեքիաթ՝ հիմք ընդունելով հեքիաթի հենակետային բառերը:[8]

Հեքիաթները մեծ նշանակություն ունեն երեխաների հոգեկան աշխարհի համար: Վերջին տարիներին ի հայտ է եկել հեքիաթաբուժություն հասկացությունը: Հոգեբանները հեքիաթների միջոցով թափանցում են երեխաների ներաշխարհը և փորձում են հարթել այնտեղ ամեն ինչ: Ռ. Խարազյանը նշում է, որ հեքիաթաբուժությունը կարելի է անցկացնել խաղային ձևերով: Օրինակ՝ հեքիաթի բեմականացում, հեքիաթի հորինում, հեքիաթային խառնաշփոթ, հեքիաթային կենդանի:

Սովորողները սիրում են պատմել իրենց կարդացած կամ լսած հեքիաթները, որոնք օգնում են աշակերտների կապակցված խոսքի կատարելագործմանը: Աշակերտներին պետք է հնարավորություն տալ վերարտադրել իրենց իմացած հեքիաթները: Յուրաքանչյուր հեքիաթ մի ամբողջական պատմություն է՝ իր դեմքերով, դեպքերով, գործողությունների զարգացմամբ՝ ժամանակի և տարածության մեջ, և, որպես այդպիսին, այն նպաստում է երեխայի պատկերավոր խոսք կառուցելու կարո-

[7] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 183:

[8] Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Երևան, ‹‹ՎՄՎ- ՊՐԻՆՏ››, 2016, էջ 133

ղության զարգացմանը: Հեքիաթը բացահայտում է երեխաների ներքին հնարավորությունները և միաժամանակ զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները: Երեխան հեքիաթի մեջ է իր համար ուրիշ աշխարհ տեսնում: «Հեքիաթի կառուցվածքի մեջ երեխան սեփական երևակայության կառուցվածքն է տեսնում, և որ նա միաժամանակ իր ներսում դա զարգացնում է՝ աշխարհի ճանաչողության, իրականությանը տիրապետելու համար անհրաժեշտ միջոցներից մեկն ստեղծելով»:[9] Աղայանը հեքիաթը համեմատել է մայրական կաթի հետ. «Հեքիաթը մեր երևակայության, մեր տաղանդի ու հանճարի կաթն է: Այդ կաթը, ինչպես սննդարար է եղել մեզանից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և քառասուն դար մեզանից հետո»:[10] «Հարկավոր է զգույշ և ուշադիր լինել 6-9 տարեկան մանուկների մանկական հետաքրքրությունների հետ և թույլ տալ, որ երեխան իր հոգու անաղարտությամբ և անմեղությամբ հնարավորինս երկար ապրի հեքիաթային աշխարհում, որովհետև կյանքը, այնուամենայնիվ, լի է բազմաթիվ դժվարություններով»[11]: Հեքիաթը երեխային կապում է մարդկանց կյանքին, պատմությանը ապրումներին:

Հեքիաթների դրական և բացասական կողմերն են՝

Դրական	Բացասական
●Հեքիաթները զարգացնում են աշակերտների երևակայությունը և ստեղծագործական մտածողությունը: ●Նպաստում են բարոյական զարգացմանը: ●Հղկում և զարգացնում են բանավոր խոսքը: ●Ձևավորում են գեղագիտական ճաշակ: ●Ունեն էկոլոգիական նշանակություն: ●Սովորեցնում են տարբերել լավը վատից, բարին չարից, գեղեցիկը տգեղից:	●Հեքիաթներից շատերում աղջիկները թակարդված են վիշապների կողմից: Սա աղջիկների մոտ կարող է ձևավորել ցածր ինքնագնահատական: ●Երբեմն հեքիաթներից երեխաները արտասվում են և կորցնում իրենց քունը: ●Մանուկներն ունեն զգայուն ներաշխարհ, և հաճախ հեքիաթները կարող են վախ առաջացնել երեխաների մոտ:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՔԻԱԹԱԹԵՐԱՊԻԱՆ և ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԵՔԻԱԹԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

[9] Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 2011, էջ 120:
[10] Ղ. Աղայան, Երկեր, հ.3, Երևան, 1963, էջ 213:
[11] Նախաշավիղ,Երևան, 2009, 1-2, էջ 122:

2.1 Բեմադրությունների դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականի ճանաչողական ոլորտի զարգացման գործում

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Այդ իսկ պատճառով խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում:

Երեխաների առջև բացելով կյանքի այս կամ այն իրավիճակը, մանրամասնելով իրադրությունը, սովորողների հետ քննարկելով, գրական նյութը դարձնում է խաղ. բեմականացում՝երեխային մղելով անկեղծ զրույցի: Երեխան ինքնուրույն պատկերացնում է խնդիրը, նրա մեջ արթնանում է համապատասխան զգացմունք և խոսքը զարգացնելով դերախաղի միջոցով՝ ի ցույց է դնում իր հույզերը:

Նա ձգտում է հասկանալ իրեն շրջապատող միջավայրը՝ընկնելով հեքիաթի սյուժեի մեջ և դա անում է բեմականացման շնորհիվ : Սակայն կան երեխաներ, որոնք չեն պատկերացնում դիմացինի տրամադրությունը, ժեստերը: Նրանց հետ անհատական աշխատանք պետք է տարվի՝օգնելով նրան ներթափանցել այդ աշխարհը:

Հեքիաթի բեմադրությունների ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ,զարգանում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը:

Բեմադրությունը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն:

Երեխային պարտադրաբար ընդգրկել դերախաղի մեջ՝ անիմաստ է: Նա պետք է կամովին ընդգրկվի բեմականացման մեջ:

Դերախաղի գործունեության հիմքը ազատ ընտրության զգացումն է: Այսպիսով, բեմախաղն ինտեգրված գործունեության լուրջ տեսակ է:

Հեքիաթը և կախարդանքը երեխային ուղեկցում են ողջ մանկության ընթացքում ,այն ինքնարտահայտման, ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհը և ինքն իրեն ճանաչելու հրաշալի միջոց է:

Երեխայի խաղն ինչ-որ դեր կատարելու պահանջմունքի արտահայտություն է: Բեմադրության ընթացքում դերախաղը ազատ դրսևորվելու հնարավորություն է:

Խաղը, դերախաղը, բեմականացումը և վերջապես հեքիաթը երեխայի զարգացման հրաշալի միջոց են:Բեմադրությունների միջոցով որակվում են բոլոր այն հատկություններն ու որակները, որոնք անհրաժեշտ են մարդուն:

Հեքիաթի բեմադրության նպատակն է զարգացնել խոսքը,երևակայությունը, դերասանական կարողությունը, գեղարվեստական ճաշակը, շարժումների կոորդինացիան:
Խաղալիս կամ բեմադրելիս երեխան անկաշկանդ փորձարկում է բանավոր խոսքը՝ առանց վախենալու սխալներից: Խոսքը ձեռք է բերում կարևոր նշանակություն հորինված իրավիճակի քննարկման ժամանակ առարկաների անվանման և գործողությունների նկարագրման համար:
Հեքիաթի ուսուցումն ամրապնդելով բեմականացմամբ՝ստեղծում ենք մի կախարդական աշխարհ ,որն անվանվում է թատրոն : Թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, ասմունքելու, հորինելու հմտություններ, մշակում է խոսքի կուլտուրա:
Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան:
Չի կարելի ընդհատել և ուղղել նրան, երեխան պետք երևակայի:
Փոխարինող առարկաները սիմվոլների հասկացման գործում զբաղեցնում են առաջին աստիճանը. չէ՞ որ ոչ ոք թույլ չի տա երեխային իրական առյուծի կամ կացնի հետ խաղալ: Յուրաքանչյուր երեխայի ամենաբաղձալի ցանկությունն է տիրանալ անհասանելի իրերին: Այդ պատճառով մանկական ֆանտազիայում կացին է դառնում սովորական մատիտը: Երեխայի մոտ զարգանում է կամածին ուշադրություն և կամածին հիշողություն: Հիմնվելով ստացած տեղեկության վրա՝ նա փոխարինող առարկան օժտում է այն հատկանիշներով, որոնք առավել շատ են նրան հետաքրքրում:
Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դեպի դերային խաղ: Ամաչկոտ, քաշվող աշակերտները հաճախ նախընտրում են մնալ ստվերում կամ լինել հեղինակի դերում:
Այստեղ կարևորվում են համապատասխան մթնոլորտի ստեղծում և մասնակիցների անկաշկանդ վարքագծի ապահովումը: Բեմադրությունները կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիք ունեն:

Բեմականացման գրագետ իրականացումն անգնահատելի օգուտ է բերում

մասնակիցներին:

Ցանկալի է, դասարանը բաժանել երկու խմբի : Եթե մի խումբը խաղում է, մյուս խումբը լինում է դիտորդ:
Բեմականացումն ու դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ:
Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները:

Բեմականացման նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է:
Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, իր ստեղծած կերպարի միջոցով: Նա հավատում է իր հորինած կերպարին, ավելին, ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը:
Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է:
Բեմադրությունը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը:
Այսպես խաղում ձևավորվում են երկար, շղթայաձև փոխկապակցված խաղային խմբեր:
Բեմադրությունները հանդիսանում են դրամատիկ գործողության տեսակ, որի մասնակիցները գործում են ընտրված դերերի շրջանակներում, ղեկավարվում են ընտրված դերի միջավայրի տրամաբանությամբ և գործում են արդեն եղած սյուժեով, կամ հենց իրենք են ստեղծում սյուժեն,նրանք հանգիստ կարող են իմպրովիզ անել, որը կբերի իրենց կամ իրենց թիմի հաղթանակին:
Այսպիսով,Բեմադրությունը և դերային խաղն իրենից ներկայացնում է մեկ կամ մի խումբ անձանց կողմից որոշակի իրադարձության խաղային մոդելավորումը:

2.2 Հեքիաթաթերապիայի դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականի ճանաչողական ոլորտի զարգացման գործում

Բոլոր երեխաներն, առանց բացառության, սիրում են հեքիաթներ: Երեխաների հետ աշխատանքում չափազանց կարևոր է ընտրել հաղոր դակցման նրանց լեզուն և մեթոդները, այսինքն՝ խոսել նրանց լեզվով: Այդ պատճառով հեքիաթները երեխաների հետ շփման ամենաարդյունավետ մի ջոցներից մեկն են համարվում: Զարմանալի է, բայց հեքիաթը համարվում է երեխայի հոգեկան զարգացման համար այնպիսի անհրաժեշտ էտապ, ինչ պիսին է, օրինակ, խաղը:
Հենց մանկական հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը աշխարհի և մարդկանց փոխհարաբերությունների հետ: Ցանկացած հեքիաթ պատ մություն է

մարդկանց փոխհարաբերությունների մասին, մեր կյանքում գործող հիմնական օրենքների մասին: Հեքիաթի լեզուն հասկանալի է երեխային: Հեքիաթը երեխայի առջև լուրջ տրամաբանական խնդիրներ չի դնում: Մանկական հեքիաթը երեխային առաջարկում է պատկերներ, որոնք նրան շատ հետաքրքիր են, իսկ կենսականորեն՝ անհրաժեշտ, ինֆորմացիան յուրացվում է աննկատ, ինքն իրեն: Բացի այդ՝ հեքիաթի շնորհիվ երեխան ձեռք է բերում իր համար բոլորովին նոր հոգեկան ակտիվություն՝ կարողություն՝ երևակայական իրավիճակներում մտացածին գործելու, իսկ այս ունակությունը հիմք է հանդիսանում ցանկացած ստեղծագործական գործունեության համար:

Հեքիաթներում իրար են բախվում չարն ու բարին, ագահությունն ու ալտրուիզմը, համարձակությունն ու վախկոտությունը, գթասրտությունն ու դաժա նությունը: Դրանք երեխային ասում են, որ աշխարհը բավականին բարդ ու հակասություններով լի է, և որ այնտեղ բավականին անարդարություններ և չարություններ կան, բայց միևնույն ժամանակ առկա է ուրախությունն ու հավատը: Իսկ ամենագլխավորը, որ հեքիաթները սովորեցնում են երեխային, այն է, որ եթե մարդը չի հանձնվում, այլ պայքարում է իր երջանկության համար, ապա նա անպայման հաղթում է:

Լսելով հեքիաթը՝ երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համա պատասխան իրավիճակներ: Փորձում է իրեն նույնացնել համարձակ և բարի քաջարի հերոսների հետ՝ նրանց հետ ճաշակելով հաղթանակի բերկրանքը:

Երեխաների հետ շփվելով հեքիաթների օգնությամբ՝ դուք կարող եք հասկանալ, թե ի՞նչն է գրավում այդ հեքիաթային սյուժեում երեխային, ի՞նչ հե քիաթային հերոս է բոլորից շատ դուր գալիս նրան, ինչու՞ է նա ընտրում հենց այդ հեքիաթը: Ժամանակի հետ երեխայի հետաքրքրությունն այս կամ այն հեքիաթի նկատմամբ փոխվում է, և դա նշանակում է, որ երեխան մեծանում է, զարգանում և իր առջև դնում կենսական այլ խնդիրներ:Երբեմն մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ- որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել: Վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այսպիսի իրավիճակից ելք կա. հարկավոր է, որ մեծահասակը ինքը ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, որտեղ երեխան իրեն զգում է ավելի ազատ և հասկացված, մի զարմանահրաշ աշխարհ, որտեղ հնարավոր են ամենաանկանխատեսելի և աներևակայելի իրադարձություն ներ ու հրաշքներ: Այս աշխարհից երեխան ավելի հեշտությամբ է ինֆորմացիա ստանում իր աշխարհի մասին; Հարկ է նշել, որ երևակայությունը երե խաների համար համարվում է ամենալավ ձեը՝ վերլուծելու իրեն շրջապատող աշխարհը: Դա նրանց լեզուն է, որը մենք՝ մեծերս, հաջողությամբ մոռացության ենք մատնել: Նշանակում է անհրաժեշտ է վերհիշել այն, իսկ այդ գործում ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են: Կան հեքիաթներ, որոնց միջոցով բացահայտում և օգտագործում ենք պրոբլեմի լուծման համար: Հեքիաթները.

1. երեխաների մոտ առաջացնում են զգացողություն, որ դուք

իրեն հասկանում եք, որ ձեզ հետաքրքրում է իր պրոբլեմները, և դուք նրա կողմից եք ու կարող եք օգնել նրան:
2. Հեքիաթների հետ շփվելիս երեխաների մոտ ձևավորվում է «ինքնօգնության մեխանիզմ»: Նրանք հասկանում են, որ կոնֆլիկտների լուծման համար պետք է ուժ փնտրել ոչ թե դրսից, այլ իրենց մեջ:
3. Հեքիաթները երեխաներին հնարավորություն են տալիս ծանոթանալ,
ձեռք բերել կյանքի դժվար իրավիճակներից դուրս գալու հնարավոր
մի քանի տարբերակներ:
Առանձնացվում են հեքիաթները ըստ տարիքների,
բայց այս բաժանումը պայմանական է: Հիմնական չափանիշը սովորող
հետաքրքրություն է հեքիաթի նկատմամբ և նրա ակտիվ արձագանքը իրա
դարձություններին, որոնք տեղի են ունենում հեքիաթում: Չնայած հարկ է նշել, որ ցանկացած հեքիաթ կարող է մեծ կամ փոքր չափով օգտակար լինել սովորողների համար:
Հարց է ծագում՝ ինչպե՞ս օգտագործել հեքիաթները: Առաջին և ամենապարզ ձևը հեքիաթներն ուղղակի ընթերցելն է: Եթե նույնիսկ սովորողը կարդալ գիտի, անհրաժեշտ է կարդալ նրա համար: Կարդալով հեքիաթը՝ անհրաժեշտ է ուշադիր լինել և հետևել, թե ինչպե՞ս է աշակերտը լսում, ինչպիսի՞ն են սովորողի ոչ վերբալ արտահայտումները, այսինքն՝ մարմնի լեզուն: Այն կարող է ձեզ օգնել հասկանալու՝ որքանով է երեխայի համար տվյալ հեքիաթը կարևոր և նշանակալից: Կարդալու ընթացքում կարելի է սովորողին խնդրել հայտնել իր կարծիքը: Կուզենա՞ նա ինչ-որ բան փոխել, ավելացնել:Աշակերտին հեքիաթի ավարտից հետո առաջարկեք քննարկել այն: Տվեք բոլոր այն հարցերը, որոնք կծագեն ձեր գլխում, բայց անհրաժեշտ է հետևել 3 հիմնական կանոններին.
1.Երեխային պետք է հնարավորություն տալ ասել ինչ ուզում է: Չի կարելի գնահատել, քննադատել սովորողի պատասխանները:
2. Նրա հետ քննարկումը սկսելուց հետո, հնարավորինս շուտ հանձնեք նրան այսպես կոչված «ղեկավարման ղեկը». թող նա ձեզ հարցեր տա:
3. Եթե երեխան չի ցանկանում խոսել, պետք չէ ստիպել:
Քննարկումից հետո կարելի է խնդրել, որ սովորողը նկարի հեքիաթը: Նկարելը համարվում է կարևոր գործոն, որը որոշ չափով հանգստացնում և լիցքաթափում է: Վերջում կարող ենք հեքիաթը բեմականացնել:

Հեքիաթաթերապիան համարվում է ամենահին հոգեբանական և մանկավարժական մեթոդներից մեկը: Հեքիաթաթերապիան հոգեթերապիայի մեթոդ է, որը հեքիաթի հորինման, ընթերցանության և վերլուծության օգնությամբ օգնում է անձին բացահայտել իր ներքին ապրումները և գիտակցել դրանց ծագումը: Այն ուղղված է օգնելու մարդկանց հասկանալու սեփական անձը, հասնելու մարդկային շփումներով ու ազատության զգացումով լի իմաստավորված և ուրախ կյանքի: Հեքիաթարերապիան նախատեսված չէ միայն երեխա ների համար, չնայած որ այն

կարելի է անվանել մանուկների համար նախատեսված մեթոդ, որովհետև հեքիաթները ուղղված են յուրաքանչյուր մարդու մաքուր և մանկական սկզբին:
Հեքիաթաթերապիան տալիս է հնարավորություն խաղարկել հիմնական կյանքի իրավիճակները անձի համար անվտանգ ռեժիմում, որն արդյունքում օգնում է հասկանալ ինքն իրեն,ակտիվացնել իր ներքին ռեսուրսները: Այն օգնում է բացահայտել անձի պոտենցիալը և ակտիվացնել այն գիտելիքները, որոնք օգնում են հենց այդ պրոբլեմի լուծման գործում: Այն փոխանցման պրոցես է, հեքիաթային իրադարձություն և դրանց լուծումը իրական կյան քում:
Երբ սկսում ես վերլուծել հեքիաթները, պարզվում է, որ հեքիաթային պատմությունները պարունակում են ինֆորմացիա՝ կյանքի պրոցեսների դինամիկայի մասին: Հեքիաթում կարելի է գտնել մարդկային ողջ պրոբլեմների լրիվ ցուցակը և դրանց լուծման պատկերավոր ձևերը:
Հեքիաթաթերապիան, որպես հոգեբանական մեթոդ, երեխաների հետ աշխատանքում ունի իր տարիքային սահմանափակումները: Երեխան պետք է հստակ պատկերացում ունենա այն մասին, որ գոյություն ունի հեքիաթային իրականություն, որը տարբեր է գոյություն ունեցող իրականությունից: Սովորաբար այսպիսի տարբերակման հմտությունը ձևավորվում է երեխայի մոտ 3,5-4 տարեկանում, չնայած, անպայմանորեն, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի զարգացման անհատական առանձնահատկությունները: Հեքիաթային սյուժետները տարաբնույթ են: Կախված սյուժեից և գործող անձից՝ կարելի է առանձնացնել հեքիաթների մի քանի խմբեր:
Հեքիաթներ կենդանիների մասին, կենդանիների և մարդկանց փոխազդե ցությունների մասին: 3-5 տարեկան երեխաների համար ավելի մոտ և հասկանալի են կենդանիների մասին հեքիաթները: Այդ տարիքում երեխաները հաճախ իդենտիֆիկացնում են իրենց կենդանիների հետ, հեշտությամբ կերպարանափոխվում են, կրկնօրինակում կենդանու վարքը: Այդ պատճառով կենդանիների մասին հեքիաթները ավելի լավ կարող են օգնել փոքրիկներին կյանքի փորձը փոխանցելու համար:
Կախարդական հեքիաթներ: Սկսած 5.5 տարեկանից երեխան իրեն իդենտիֆիկացնում է մարդկային կերպարների արքայազնների, թագուհիների, հրաշագործների, զինվորների և այլոց հետ: Տարիքի հետ երեխայի մոտ ավելի մեծանում է հետաքրքրությունը հեքիաթների հանդեպ: Նա սկսում է ընթերցել հեքիաթներ, պատմություններ՝ տարբեր կերպարների մասին փորձելով կրկնօրինակել վարքային տարբեր մոդելներ և դերեր:
Սարսափ հեքիաթներ: Հեքիաթներ՝ չար ուժերի, կախարդների, գերբնական ուժերի մասին: Որպես կանոն, 6 տարեկանից սկսած, երեխաները սկսում են ինտեսիվ կարդալ և միմյանց պատմել հեքիաթ - սարսափներ: Հեքիաթ — սարսափների և չար ոգու մասին պատմությունների միջոցով երեխաները մասամբ վերապրում են իրենց վախերը: Դրանք կարելի է օգտագործել երեխաների և դեռահասների խմբերում սթրեսակայունության բարձրացման և լարվածության թուլացման համար: Այս

դեպքերում սովորաբար 2 կանոն է մտցվում՝ պատմությունները պետք է պատմել վախազդու ձայնով ձգելով՝ձայնավորները և խոսքը երկարացնելով: Կենցաղային հեքիաթներ: Այստեղ հաճախ պատմվում է ընտանեկան կյանքի դժվարությունների, կոնֆլիկտային իրավիճակների լուծման ձևեր: Այդ իսկ պատճառով, դրանք անփոխարինելի դեր են խաղում ընտանեկան խորհրդատվության և այն դեռահասների հետ աշխատանքում, որոնք խնդիրներ ունեն ընտանեկան փոխհարաբերություններում:

Դիդակտիկ հեքիաթներ: Դրանք ստեղծվում են մանկավարժների կողմից՝ ուսումնական նյութը ամրապնդելու նպատակով, որոնց ժամանակ աբստրակտ սիմվոլները /թվեր, բառեր, ձայներ, թվաբանական գործողություններ և այլն/ կենդանանում են, ստեղծվում է աշխարհի հեքիաթային պատկեր, որտեղ նրանք ապրում են: Դիդակտիկ հեքիաթները կարող են բացահայտել որոշակի գիտելիքների կարևորությունը և իմաստը: Դիդակտիկ հեքիաթների ձևով կարելի է ներկայացնել ուսումնական առաջադրանքները:

Դիդակտիկ հեքիաթների ստեղծման ալգորիթմը հետևյալն է.

1. Մուտք հեքիաթային աշխարհ, որտեղ ապրում է կենդանացած սիմվոլը: Պատմություն այդ աշխարհի սովորությունների, օրենքների մասին:

2. Բարեկեցության ջախջախում, խախտում: Քանդողի դերում կարող են հանդես գալ չար հեքիաթային հերոսները վիշապ, կախարդ, տարերային աղետները քամի, փոթորիկ/, ծանր հուզական վիճակները/ տխրություն, թա խիծ, մենակություն/:

3. Դիմում երեխային

Պարզաբանվում է, որ միայն մարդը, որն ունի խանդավառ սիրտ և գիտելիքներ, կարող է ամեն ինչ փրկել: Դրա համար, որ պեսզի վերականգնվի աշխարհը, պետք է կատարել որոշակի առաջադրանք:

Հոգեշտկողական հեքիաթներ: Այսպիսի հեքիաթները ստեղծվում են երեխայի վարքի վրա նրբորեն ներգործելու համար: Շտկման տակ այստեղ պետք է հասկանալ երեխայի անարդյունավետ վարքի ձևի փոխարինումը, առավել արդյունավետ ձևով, ինչպես նաև երեխային պետք է բացատրել տե ղի ունեցածի իմաստը: Պետք է նշել, որ հոգեշտկողական հեքիաթների կիրառումը խորհուրդ է տրվում իրականացնել մինչև 11-13 տարեկանը:

Հոգեշտկողական հեքիաթի ստեղծման համար կարելի է օգտագործել հետևյալ ալգորիթմը 1. Երեխայի տարիքին, սեռին, բնավորությանըհամապատասխան հեքիաթային հերոսի ընտրություն:

2. Հեքիաթային հերոսի կյանքը պետք է նկարագրվի այնպես, որ երեխան գտնի նմանություն իր կյանքի հետ:

3. Տեղափոխել հերոսին իրական պրոբլեմի հետ կապված հեքիաթային իրավիճակ: Նկարագրել հերոսի բոլոր ապրումները այդ իրավիճակում:

4. Հերոսը սկսում է ելք փնտրել ստեղծված իրավիճակից, կամ էլ իրավի ճակն ավելի է խորանում և սրվում այն տանելով դեպի տրամաբանա կան ավարտ, որը և հերոսին մղում է փոփոխությունների: Հերոսը կա րող է հանդիպել այլ էակների, որոնք

նմանատիպ իրավիճակում կարողացել են ելք գտնել կամ էլ հանդիպել իմաստունի, որը բացատրում է կատարվածի իմաստը: Պետք է հերոսին, հեքիաթային իրադարձության միջոցով, ցույց տալ ստեղծված իրավիճակը տարբեր տեսանկյուններից և առաջարկել վարքի այլընտրանքային ձևեր:

5. Հերոսը հասկանում է իր սխալները, ընդունում դրանք և կանգնում փոփոխությունների ուղղու վրա: Ստեղծելով հոգեշտկողական հեքիաթներ, պետք է հաշվի առնել երեխայի «վատ» վարքի հիմնական հոգեբանական պատճառները, դրանցից են.

1. Սեփական անձի հանդեպ ուշադրություն գրավելու ցանկություն: Այս դեպքում հեքիաթում պետք է ընդգրկել ուշադրությունը գրավելու սո ցիալապես ընդունելի դրական մոդելներ:

2. Մեծերին, հասակակիցներին, իրավիճակները իշխելու ցանկություն: Այս դեպքում պետք է առաջարկել լավ առաջնորդին բնորոշ որակների դրական մոդել:

3. Ինչ- որ բանի համար մեծին վրեժխնդիր լինելու ցանկություն:

4. Վախեր, տագնապներ, անհաջողություններ ամենատարբեր պատճառներով: Այս դեպքում շտկողական հեքիաթում հերոսին վախի հաղթահարման համար աջակցություն է ցուցաբերվում:

5. Չափի զգացումը բավարար ձևավորված չէ: Այս դեպքում հոգեշտկողական հեքիաթը կարող է իրավիճակը հասցնել աբսուրդի, ցույց տալով հերոսների արարքների հետևանքները, վարքի ընտրությունը թողնելով երեխայի վրա:

6.Պրոբլեմներ՝ կախված տարիքային առանձնահատկությունների հետ:

Հոգեթերապևտիկ հեքիաթներ Դրանք հեքիաթներ են, որոնք թափանցում են բացահայտում տեղի ունեցող իրադարձությունների խորիմաստությունը: Պատմություններ,որոնք օգնում են հասկանալ կատարվածը այլ տեսանկյունից:

Այսպիսի հեքիաթները միշտ միանշանակ և միշտ չէ, որ երջանիկ ավարտ են ունենում, բայց բավականին նպաստում անձի աճին:

Շատ հոգեթերապևտիկ հեքիաթներ նվիրված կյանքի մահվան խնդիրներին: Այսպիսի հեքիաթները օգնում են այն դեպքերում, երբ մնացած հոգեբանական տեխնիկաները անզոր են, այն դեպքերում, որտեղ պետք է անցնել փոխհարաբերությունների իրադարձությունների փիլիսոփայական կողմին:

2.3. Բեմադրությունների դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնական գործընթացում

Դերախաղը,բեմականացումները կրտսեր դպրոցականին տալիս են հաղորդակցվելու , ստեղծագործելու,երևակայելու, ինքնադրսևորվելու հնարավորություն: Առավել մեծ է բեմադրությունների դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացում: Նրանց համար տեղեկատվության ընկալման գլխավոր դերը տեսողական զգայարանն է՝ աչքերը :

Տեսողական ընկալման արդյունքում նրանք յուրացնում են նյութը `անգամ մտապահում են,պատմում ,նկարագրում:Բեմադրությունները,դասապրոցեսին

կազմակերպած խաղերն ու երկխոսությունները ,հումորը, ժողովրդական բառն ու բանը ավելի են << բացում>> հատուկ կարիքներով սովորողներին ,նպաստում նրանց ինքնադրսևորմանը,ամրապնդում նյութը՝ դարձնելով դյուրըմբռնելի ։

Դասապրոցեսի ընթացքում,թեման դարձնելով փոքրիկ բեմադրություն,բարձրացնում է սովորողների ակտիվությունը,աշխուժություն է մտցնում ու նրանք էլ փորձում են մասնակից լինել փոքրիկ միջամտություններով, դիմախաղով, շարժուձևով ։

Խաղադերային գործողությունները, երգ-երաժշտությունը, գույնը, նկարը, առարկաները առավել արդյունավետ են դարձնում նյութի յուրացումը։

Այն նյութերը, որոնք դասապրոցեսին սովորողները դժվարությամբ են ընկալում, հիշում բեմադրությունների ժամանակ դառնում է ինքնարտահայտման եղանակ ու գիտելիքի պաշար։Երեխան սկսում է սիրել դերը, մերվում, անձնավորվում է հերոսի լավ ու վատ գծերի մեջ, դրական լիցքեր է ստանում և հաղորդում։

Բեմադրությունների ընթացքում հնարավոր են անկախատեսելի շեղումներ սցենարից՝ պայմանավորված սովորողների վարքային առանձնահատկություններով։ Հուզակամային վիճակը , շրջապատի ազդակները, խոսքը, միմիկան , տրամադրվա-ծությունը հզոր խթանիչներ են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար։

Բեմադրությունների ժամանակ, ուշադրություն չդարձնելով սցենարից շեղումների վրա, մոռացկոտության, բաց թողումների վրա՝ թույլ ենք տալիս սովորողներին ինքնուրույն կողմնորոշվել ու գործել։ Այս ամենը սովորողին տալիս է հնարավոր-ություն ձեռք բերել հմտություն ոչ ստանդարտ ,անսպասելի իրավիճակից դուրս գալու համար։ Ցանկացած հեքիաթի բեմադրության մեջ ունենալով 《միջուկը》,

《մեխը》 այն դարձնում է թիրախ՝ նպատակին հասնելու համար։

Ամենաթույլ կարողություններով ու սահմանափակ հնարավորություններով սովորողներն էլ ընդգրկվում են բեմադրությունների մեջ, արժևորվում են ու կարևորվում ։ Մասնակցելով բեմադրություններին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն ,իրենց զգում են հասարակության լիիրավ անդամ, իսկ ընկերները նրանց ընկալում և ընդունում են իրենց առանձնահատկու- թյուններով հանդերձ։

Զարմանալի է, այն ինչ դասերին դժվար ըմբռնելի է, բեմադրությունների ժամանակ դառնում է դյուրըմբռնելի՝

•շուտ են սովորում և մտապահում խոսքերը
•երգում են, պարում են՝ մոռանալով ամաչկոտությունը կամ ագրեսիան

•չեն հոգնում
•դառնում են անկաշկանդ
•իրավիճակին համապատասխան վարք են դրսևորում
•հեշտությամբ են կենտրոնացնում ուշադրությունը
•ենթարկվում են դերի կանոններին
•դառնում են թիմի անդամ

Բեմականացումների ավարտին ստացած ծափողջույնները սովորողներին պարգևում է հպարտություն, սիրված ու ընդունված լինելու զգացողություններ։ Սովորողների փայլուն ու ծիծաղկոտ աչքերը արդյունքն են ճիշտ ընտրված մեթոդի ու նյութի յուրացմանը։

ԳԼՈՒԽ 3

Հեքիաթաթերապիայի և բեմադրությունների դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մոտ համագործակցային կարողությունների ձևավորման միջոց

(Իմ փորձից)

Այսպիսով՝ հիմք ընդունելով հեքիաթի, հեքիաթաթերապիայի մասին վերը նշված գիտատեսական դատողությունները, դասագրքերի ուսումնասիրությունները՝ ես փորձել եմ հետազոտություն կատարել տարրական դասարաններում: Աշխատելով Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում որպես դասվար՝ իմ աշխատանքի ընթացքում կատարել եմ փոքրիկ հետազոտություն: Իմ հետազոտական աշխատանքն իրականացրել եմ 2-րդ դասարանում: Նպատակ ունենալով

դասարանում ձևավորել համագործակցային կարողություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մոտ:

Համագործակցային կարողությունները դրանք մի շարք կարողություններից կազմված շղթա են , որոնք պետք է ձևավորել անընդհատ և ողջ ուսումնառության ընթացքում:

Եթե սովորողը ոտք է դնում դպրոցի շեմից իր հետ բերելով համագործակցային կարողությունների որոշակի տարրեր, ապա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը միանգամայն <<մերկ >>է այդ գործում :

Աշխատանքիս նպատակը՝

- Ճիշտ ընտրված հեքիաթների , տարբեր ստեղծագործությունների ընթերցման քննարկման, բեմադրության միջոցով դասարանում ձևավորել համագործակցային խումբ:

Արդյունքում կունենանք դասարան, որտեղ սովորողները ընդունում են իրար փոխլրացնում և համագործակցում են իրար հետ :

Նպատակիս հասնելու համար առանձնացրել եմ նստեղծագործությունների շարք նշված հերթականությամբ՝

1. Կարապը , գայլաձուկը , խեցգետինը
2. Վատ ընկերը
3. Երեք խոզուկները
4. Ճամփորդները

1-ին դասաժամին ծանոթացել և քննարկել ենք <<Կարապը , գայլաձուկը , խեցգետինը>>:/հավելված 1/

Արդյունքում ստացանք հետևյալ պատկերը



Սովորողներից 8 հոգի կարողացան ճիշտ մեկնաբանել և վերաբերմունք ցույց տալ . 3-ը կողմնորոշվեցին ուղղորդմամբ;

2-րդ դասաժամ՝ << Վատ ընկերը>>

Դասը սկսվեց ընկերների մասին կարճ տեսաֆիլմ դիտելով . որից հետո սովորողները ծանոթացան ստեղծագործության հետ : Դասապրոցեսի ավարտին սովորողներից շատերը չէին թաքցնում բարկությունը ծառը մագլցող տղայի հանդեպ: Նրանք առանց հարցադրումների ու առանց օգնության ինքնուրույն եկան ճիշտ եզրահանգման :

3-րդ դասաժամ՝ <<Երեք խոզուկները>>

Սովորողները նախ դիտեցին մուլտֆիլմը, հետո ընթերցեցին հեքիաթը ,վերլուծեցին եղբայրների գործողությունները: Դասի ավարտին սովորողների 65% կարողացավ ճիշտ վերլուծել եղբայրների գործողությունները , արեցին ճիշտ առաջարկություններ ու եղբայներին տվեցին խորհուրդներ , իսկ 35% վերլուծելուց հետո միայն եկան եզրահանգման :



4-րդ դասաժամ ՝ << Ճամփորդները>>

Սովորողները վայելեցին 6-րդ դասարանի կողմից կազմակերպված բեմադրությունը, որից հետո լսեցին ստեղծագործության ընթեցումը :Արդյունքում սովորողները մեծ ոգևորությամբ էին խոսում աքաղաղի և շան ընկերության մասին և նույնականացնում էին այդ հերոսներին իրենց հետ ;

Ուսումնասիրությունը ամփոփեցի հոկտեմբեր ամսվա սկզբին՝ կատարելով վերլուծություն բոլոր ստեղծագործությունների:

Արդյունքում պարզվեց , որ սովորողների մոտ ձևավորվել է վերաբերմունք. արժեհամակարգ դեպի ընկերությունը , փոխօգնությունը, համագործակցությունը :

Ուսումնասիրությունը ամփոփեցի խմբային աշխատանքով ՝ պատրաստելով պաստառ՝ <<Ինչպիսի ընկեր կլինեմ ես>>:

Աշխատանքի ավարտին դասարանում զգացվում էր խմբային համագործակցության ծիլերի նշույլներ :Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները փորձում էին լինել միասնական, օգնել միմյանց և համագործակցել :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հեքիաթը և հեքիաթաթերապիան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականի զարգացմանը միտված ուղենիշ>> մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Հեքիաթները միշտ էլ մեծ դեր են ունեցել մանուկների աշխարհաճանաչողության, բարոյական արժեքների ձևավորման գործում. դրա համար որքան շատ հեքիաթներ ընդգրկված լինեն դասագրքերում, այնքան ավելի կնպաստեն աշակերտների դաստիարակության գործընթացին:
2. Դասերի ժամանակ հեքիաթի բեմադրություն կատարելով մենք ավելի մեծ արդյունքներ կարող ենք գրանցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականի ճանաչողական զարգացման գործում:
3. Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման, այլև և մտքի ճկունության, երևակայության, համագործակցային կարողությունների զարգացման գործում:
4. Կարևոր է՝ տարրական դպրոցի ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ, որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Դասի օրինակելի պլան **Հավելված 1**

Ամսաթիվ՝ 16.09.2023
Դասարան՝ 2-րդ
Առարկա՝ Դասղեկի ժամ
Դասի տեսակը՝ Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս

Դասի թեմա՝ <<Կարապը, խեցգետինը և գայլաձուկը>>
Դասի նպատակները և խնդիրները՝
○ Սերմանել հավատարմության, հանդուրժողականության, ընկերասիրության գաղափարը,
○ Բացատրել, որ չի կարելի ագահ և էգոիստ լինել,
○ Հանգեցնել ունեցածը ընկերների հետ կիսելու գաղափարին,
○Ձևավորել <<մենք>>-ի, միասնության գաղափարը:

Դասի վերջնարդյունքներ՝

- Արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները ,կարիքները
- Ստեղծի ընկերական հարաբերություններ՝ լսի, հասկանա , ապրումակցի , համագործակցի
- Դրսևորի դրական վերաբերմունք , ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը

Խաչվող հասկացություններ՝ պատճառ և հետևանք
Դասին անհրաժեշտ զննական պարագաներ՝
Տեսաֆիլմ ընկերության մասին, նկարների դասի վերաբերյալ և քարտիկներ
Դասին կիրառվող ինտերակտիվ մեթոդներ՝
<<Ձնագնդիկ>> մեթոդ և խմբային աշխատանքի մեթոդ:
Դասի ընթացքը
Դիտել ընկերության մասին տեսաֆիլմ և հարցերի միջոցով քննարկել այն.
◇ Ովքե՞ր էին տեսաֆիլմի հերոսները:
◇ Ի՞նչ պատահեց նրանց հետ:
◇ Ինչպե՞ս նրանք դուրս եկան իրավիճակից:
◇ Ինչպե՞ս կվարվեիք դուք:
Այնուհետև, կիրառելով <<Ձնագնդիկ>> մեթոդը, հարցերի միջոցով նախապատրաստվել պատմելուն.
1. Ի՞նչ արեց հերոսը
2. Ինչու՞ այդպես վարվեց:
3. Ի՞նչ եք կարծում նրա արարքը ճիշտ էր:
4. Ի՞նչ եղավ վերջում:

Հարցնել պատմել՝ սկզբում ընդարձակ, այնուհետև համառոտ և դերերով:
Պատմելուց հետո անցկացնել ամփոփիչ հարցազրույց.
¤Ի՞նչ սովորեցիք դասից:
¤ Երբևէ դուք այդպես կվարվե՞ք:
¤ Եթե հնարավորություն ունենայիք այդ պահին խոսելու ծառի հետ ի՞նչ խորհուրդ կտայիք:

Ֆիզկուլտ դադար

Երաժշտության ներքո պարային վարժությունների կատարում:

<u>Նոր նյութ</u>

Խթանման փուլ

Նախապատրաստական զրույց ընկերության մասին
Երջանիկ են նրանք, ովքեր ունեն ընկերներ, շատ ընկերներ…. Սակայն ի՞նչ ենք հասկանում ընկերություն ասելով…..մի՞թե այն, ինչ կատարվում է մեր շուրջը ընկերություն է… շատերի համար այո, իսկ որոշների համար՝ ոչ….. ընկերությունն ուրիշ է, ընկերությունը նման է սիրո՝ այո, սիրո…. Այն պետք է լինի սիրո նման մաքուր, սիրո նման անկեղծ և սիրո նման հավատարիմ…. Երանի նրան ով շատ ընկերներ ունի՞, ոչ՝ երանի նրան, ով իր ընկերներին շատ չի համարում… երանի նրան, ով ունի ոչ թե շատ, այլ շատ մոտիկ ընկերներ, ով կարող է իր ընկերների հետ առանց մտածելու կիսել ամեն ինչ՝ ուրախություն և տխրություն, ծիծաղ և լաց…. երանի նրան, ով ունի թեկուզ մեկ, բայց հավատարիմ ընկեր, վստահելի մարդ իր կողքին…. իհարկե ինչպես ամեն ինչ, ընկերությունն էլ իդեալական չի լինում, բայց այն կարելի է մոտեցնել հավերժականին…. Ընկերները պետք են ամեն տեղ, բայց չպետք է ունենալ ընկերներ պահված ինչ-ինչ նպատակների համար, մի՞թե դա հարգալից ընկերություն է… իսկ այնտեղ, որտեղ հարգանք չկա, ընկերության մասին խոսելն ավելորդ է… ընկերության մեջ պետք է լինի հավասարություն, նվիրվածություն, պատրաստակամություն և մեծ սեր… Գնահատեք ձեր ընկերներին, իսկական ընկերներին, ընկերությանը ոչինչ չի կարող փոխարինել: Ես կարծում եմ ,որ անհատը հասարակության մեջ միայնակ ապրել չի կարող:Այդ պատճառով նա իր համար փնտրում և գտնում է սրտակից և մոտ ընկեր:

Հաճախ ճիշտ չի լինում ընտրությունը և նրանք շուտ բաժանվում են :Սակայն հանդիպում են կյանքում ընկերներ ,որոնք անփոխարինելի են և միշտ վախենում ես նրան կորցնելուց : Այդպիսի ընկերները ստիպում են մեզ ապրել.վայելել ,կյանքը ,չտխրել,խնդիրները ճիշտ լուծել: Հաճախ մեզ միայն նրանց ներկայությունը բավական է որպեսզի մենք մեզ լավ զգանք : Իսկական ընկերները պատրաստ են միասին հասնել աշխարհի ծայրը: Մենք կիսում ենք նրանց հետ մեր ուրախության և տխրության պահերը: Ասում ենք գաղտնիքներ, որ դեռևս ոչ ոքի չենք վստահել : Հիանալի բան է ընկեր ունենալը:
Այնուհետև հանելուկների միջոցով աստիճանաբար մոտեցնում ենք նոր նյութին.

Թռչում է հավ չի,

Լողում է նավ չի,

Երգում է այն ժամին,

Երբ մոտ է իր մահին:

Մկրատ ճանկերով խեցին այս ճարպիկ,

Ջրում ճանկում է ձկնիկներ փոքրիկ:

Ինքը կանաչ է, համեղ ուտելիք,

Բայց հենց որ եփես կկարմրի ամոթից:

Զուկ- կենդանի է գիշատիչ,

Անվախ լողրդ ջրային

Զուկ-կենդանու արմատով,

Մի կենդանի կա վայրի:

Իմաստի ընկալման փուլ

Գրատախտակին գրում ենք դասի վերնագիրը և երեխաներին հանձնարարում գուշակել, թե իրենց կարծիքով ինչի մասին է դասանյութը: Որից հետո ընթերցում ենք դասը, կատարում ենք վերլուծություն :

Դուրս ենք գրում նոր, հենակետային բառերը և բացատրում.

Կշռադատման փուլ /անդրադարձ/

Հարցերի միջոցով ամփոփել դասը.

◆ Ինչու՞ կարապը, խեցգետինը և գայլաձուկը չկարողացան շարժել սայլը:

◆ Ինչ եք կարծում, եթե նրանցից մեկը փորձեր սայլը մենակ շարժել, կկարողանա՞ր:

◆ Ի՞նչ է ուսուցանում առակը:

Այնուհետև կարդում ենք առած- ասացվածքներ ընկերության, հանդուրժողականության վերաբերյալ:

1.Նա, ով հավատարիմ ընկեր ունի, կարող է հաշվել, որ ինքը երկու հոգի է:

2. Իսկական ընկերը բարիքներից մեծագույնն է:

3. Ես ամենից շատ սիրում եմ ընկերոջը նրա համար, որ նա թերություններ ունի, որոնց մասին կարելի է խոսել նրա հետ:

4. Միայն ընկերոջ ձեռքը կարող է փշերը սրտից հանել։

5. Անհավատարիմ ընկերները, դրանք… արևային ժամացույցներն են,
որոնք օգտակար են միայն այնքան ժամանակ, քանի դեռ լուսավորում է արևը։

Կատարռել քննարկում <<Եթե ես լինեի հերոսներից մեկը >>:

Այսպիսով … /երեխաները կատարում են եզրակացություն/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ., Երկեր, հ.3, Երևան, 1963:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 3», Երևան, 2008:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», Երևան, 2016:
5. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդական բանահյուսություն,Երևան, 1967:
6. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008:
7. Թորոսյան Կ., Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Հ., Մայրենիի 2-4 ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
8. Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Երևան, «ՎՄՎ- ՊՐԻՆՏ», 2016
9. Հայ նոր գրականության պատմություն, հ.5, Երևան, 1979:

10. Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական հեքիաթները, «Պատմաբանասիրական հանդես», №3, Երևան, 1965:
11. Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց բառարան, Երևան, 2013:
12. Նախաշավիղ, 1-2, Երևան, 2009:
13. Ջրբաշյան Էդ., Գրականագիտական ներածություն, Երևան, 1996:
14. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Երևան, 2006:
15. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 2011:
16. Սարգսյան «Մայրենի 1», Երևան, 2009:
17. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ.,Ս. Գրիգորյան, «Մայրենի 2», Երևան, 2009:
18. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ե. Ջիլավյան, «Մայրենի 3», Երևան,2015:
19. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., «Մայրենի 4», Երևան, 2009: